քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Միկարտ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատար մեքենաների պահեստամասերի, ներկերի, մալուխների, մետաղալարերիի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ <<ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-4/4>> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2024թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3.2-րդ կետով կայացված՝ 32-րդ չափաբաժնի մասով <<Միկարտ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք <<Միկարտ>> ՍՊԸ-ին 32-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել մասնակի.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատար մեքենաների պահեստամասերի, ներկերի, մալուխների, մետաղալարերիի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ <<ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-4/4>> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2024թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3.2-րդ կետով կայացված՝ 32-րդ չափաբաժնի մասով <<Միկարտ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Հայցը մնացած մասով մերժել:

3. ՀՀ պաշտպանության նախարարությանից հօգուտ <<Միկարտ>> ՍՊԸ-ի

բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

5. **Վճռի <<Եզրափակիչ>> մասի 1.1. և 3. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am